ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» (Կ-111-10.08.2017-ՊԻՄԻ-011/0) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ
1	Պատգամավորներ՝ Հրայր Թովմասյան, Գևորգ Կոստանյան	Հոդվածներ 35-36	Գլխավոր դատախազին և նրա տեղակալներին օրենքի նախագծով նախատեսված պահանջները վերանայել՝ չսահմանափակվելով միայն քրեական և քրեադատավարական մասնագիտացմամբ իրականացված աշխատանքի փորձառությամբ:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նախագիծը լրամշակվել է՝ նախատեսելով, Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով *<u>և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ</u>*, բարձրագույն կրթությամբ իրավաբանը: Գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում կարող է նշանակվել երեսուն տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության	Առաջարկությունն ընդունվել է

				քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և *մասնագիտական աշխատանքի առնվազն յոթ տարվա փորձառությամբ*, բարձրագույն կրթությամբ իրավաբանը	
2	<< կառավարություն	Հոդվածներ 38 և 50	Առաջարկվում է նախագծով նախատեսել դրույթ, ըստ որի Գլխավոր դատախազը թեկնածությունների ցուցակում անձանց չընդգրկելու դեպքում այդ մասին ընդունի պատճառաբանված որոշում, որն էլ իր հերթին հնարավոր կլինի բողոքարկել դատական կարգով: Նույնը վերաբերվում է ծառայուղական առաջխաղացման ցուցակների կազմմանը. Այն դեպքում, երբ որակավորման հանձնաժողովը դատախազին ատեստավորելիս եզրակացության մեջ չի նշում, որ անձը միաժամանակ ենթակա է ներգրավման ծառայողական առաջխաղացման ցուցակում, ապա հանձնաժողովի որոշումը անձի կողմից բողոքարկվում է Գլխավոր դատախազին: Վերջինս եթե ընդունի որոշում բողոքը մերժելու մասին, այդ որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:	Ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը	Առաջարկությունն ընդունվել է